ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2025 թվականի N 1645 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 867 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման, բժշկական արտադրատեսակների արտադրության, բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 867 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) N 1 հավելվածով հաստատված կարգը 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով.

«5.1. Դեղերի արտադրության լիցենզիաները տրվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Լիցենզիաները էլեկտրոնային եղանակով (վերջին-ներիս գեներացման և արտապատկերման միջոցով) տրվելու դեպքում լիցեն-զիաների ձևերը կարող են տարբերվել սույն որոշման N 2 հավելվածով հաստատ-ված թղթային եղանակով տրվող լիցենզիաների ձևերից՝ պահպանելով դրանցով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև պարունակում են N 2 հավելվածով սահմանված՝ էլեկտրոնային եղանակով տրվող լիցենզիաներին ներկայացվող լրացուցիչ տեղեկություններ:».

2) N 1 հավելվածով հաստատված կարգի 14-րդ կետը «պատճենները» բառից հետո լրացնել «, իսկ էլեկտրոնային եղանակով տրված լիցենզիայի դեպքում՝ արագ արձագանքման ծածկագրերը (QR Code),» բառերով.

3) N 3 հավելվածով հաստատված կարգի 3-րդ կետում «անժամկետ» բառը փոխարինել «հինգ տարի ժամկետով» բառերով.

4) N 3 հավելվածով հաստատված կարգը 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետով.

«3.1. Դեղատնային գործունեության իրականացման լիցենզիաները տրվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Լիցենզիաների էլեկտրոնային եղանակով (վերջիններիս գեներացման և արտապատկերման միջոցով) տրվելու դեպքում լիցենզիաների ձևերը կարող են տարբերվել սույն որոշման N 4 հավել-վածով հաստատված թղթային եղանակով տրվող լիցենզիաների ձևերից՝ պահ-պանելով դրանցով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև պարունակում են N 4 հավելվածով սահմանված՝ էլեկտրոնային եղանակով տրվող լիցեն-զիաներին ներկայացվող լրացուցիչ տեղեկություններ:».

5) N 3 հավելվածով հաստատված կարգի 41-րդ կետը «պատճենները» բառից հետո լրացնել «, իսկ էլեկտրոնային եղանակով տրված լիցենզիայի դեպքում՝ արագ արձագանքման ծածկագրերը (QR Code),» բառերով.

6) N 5 հավելվածով հաստատված կարգի 4-րդ կետում «անժամկետ» բառը փոխարինել «հինգ տարի ժամկետով» բառերով.

7) N 5 հավելվածով հաստատված կարգը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.

«4.1. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար լիցենզիաները տրվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Լիցենզիաների էլեկտրոնային եղանակով (վերջիններիս գեներացման և արտապատկերման միջոցով) տրվելու դեպքում լիցենզիայի ձևերը կարող են տարբերվել սույն որոշման N 6 հավելվածով հաստատված թղթային եղանակով տրվող լիցենզիաների ձևերից՝ պահպանելով դրանցով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև պարունակում են N 6 հավելվածով սահմանված՝ էլեկտրոնային եղանակով տրվող լիցենզիաներին ներկայացվող լրացուցիչ տեղեկություններ:».

8) N 5 հավելվածով հաստատված կարգի 13-րդ կետը «պատճենները» բառից հետո լրացնել «, իսկ էլեկտրոնային եղանակով տրված լիցենզիաների դեպքում՝ արագ արձագանքման ծածկագրերը (QR Code),» բառերով.

9) N 9 հավելվածով հաստատված կարգը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.

«4.1. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիաները տրվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Լիցենզիաների էլեկտրոնային եղանակով (վերջիններիս գեներացման և արտապատկերման միջոցով) տրվելու դեպքում լիցենզիայի ձևերը կարող են տարբերվել սույն որոշման N 10 հավելվածով հաստատված թղթային եղանակով տրվող լիցենզիաների ձևերից՝ պահպանելով դրանցով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև պարունակում են N 10 հավելվածով սահմանված՝ էլեկտրոնային եղանակով տրվող լիցենզիաներին ներկայացվող լրացուցիչ տեղեկություններ:».

10) N 9 հավելվածով հաստատված կարգը 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին կետով.

«7.1. Դեղերի մեծածախ իրացման՝ էլեկտրոնային եղանակով տրված լիցենզիաների հետ տրամադրվող ներդիրը ևս տրամադրվում է էլեկտրոնային եղանակով: Ներդիրի էլեկտրոնային եղանակով տրվելու դեպքում ներդիրի ձևերը կարող են տարբերվել սույն հավելվածի N 1 ձևով հաստատված թղթային եղանակով

տրվող ներդիրի ձևերից՝ պահպանելով դրանցով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև պարունակում են սույն հավելվածի 18-րդ կետով սահմանված՝ էլեկտրոնային եղանակով տրվող ներդիրներին ներկայացվող լրացուցիչ տեղեկություններ:».

11) N 9 հավելվածով հաստատված կարգը 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 18-րդ կետով.

«18. Էլեկտրոնային եղանակով տրված ներդիրները պարունակում են նաև արագ արձագանքման ծածկագիր (QR Code) և հետևյալ նշումը՝

«ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ _ _ _ _-_ _ _ _-_ _ _ _-_ _ _ _

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել՝ https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):»:».

12) N 17 հավելվածով հաստատված կարգը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.

«4.1. Բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիաները տրվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Լիցենզիաների էլեկտրոնային եղանակով (վերջիններիս գեներացման և արտապատկերման միջոցով) տրվելու դեպքում լիցենզիայի ձևերը կարող են տարբերվել սույն որոշման N 18 հավելվածով հաստատված թղթային եղանակով տրվող լիցենզիաների ձևերից՝ պահպանելով դրանցով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև պարունակում են N 18 հավելվածով սահմանված՝ էլեկտրոնային եղանակով տրվող լիցենզիաներին ներկայացվող լրացուցիչ տեղեկություններ:».

13) N 17 հավելվածով հաստատված կարգը 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին կետով.

«6.1. Բժշկական արտադրատեսակների արտադրության՝ էլեկտրոնային եղանակով տրված լիցենզիաների հետ տրամադրվող ներդիրը ևս տրամադրվում

է էլեկտրոնային եղանակով: Ներդիրի էլեկտրոնային եղանակով տրվելու դեպքում ներդիրի ձևերը կարող են տարբերվել սույն հավելվածի N 1 ձևով հաստատված թղթային եղանակով տրվող ներդիրի ձևերից՝ պահպանելով դրանցով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև պարունակում են սույն հավելվածի 17.1-ին կետով սահմանված՝ էլեկտրոնային եղանակով տրվող ներդիրներին ներկայացվող լրացուցիչ տեղեկություններ:».

14) N 17 հավելվածով հաստատված կարգը 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին կետով.

«17.1. Էլեկտրոնային եղանակով տրված ներդիրները պարունակում են նաև արագ արձագանքման ծածկագիր (QR Code) և հետևյալ նշումը՝

«ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ _ _ _ _-_ _ _ _-_ _ _ _-_ _ _ _

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել՝ https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):»:».

15) N 19 հավելվածով հաստատված կարգը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.

«4.1. Բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիաները տրվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Լիցենզիաների էլեկտրոնային եղանակով (վերջիններիս գեներացման և արտապատկերման միջոցով) տրվելու դեպքում լիցենզիաների ձևերը կարող են տարբերվել սույն որոշման N 20 հավելվածով հաստատված թղթային եղանակով տրվող լիցենզիաների ձևերից՝ պահպանելով դրանցով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև պարունակում են N 20 հավելվածով սահմանված՝ էլեկտրոնային եղանակով տրվող լիցենզիաներին ներկայացվող լրացուցիչ տեղեկություններ:».

16) N 19 հավելվածով հաստատված կարգը 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով.

«5.1. Բժշկական արտադրատեսակների սպասարկման՝ էլեկտրոնային եղանակով տրված լիցենզիաների հետ տրամադրվող ներդիրը ևս տրամադրվում է էլեկտրոնային եղանակով: Ներդիրի էլեկտրոնային եղանակով տրվելու դեպքում ներդիրի ձևերը կարող են տարբերվել սույն հավելվածի N 1 ձևով հաստատված թղթային եղանակով տրվող ներդիրի ձևերից՝ պահպանելով դրանցով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև պարունակում են սույն հավելվածի 14.1-ին կետով սահմանված՝ էլեկտրոնային եղանակով տրվող ներդիրներին ներկայացվող լրացուցիչ տեղեկություններ:».

17) N 19 հավելվածով հաստատված կարգը 14-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.1-ին կետով.

«14.1. Էլեկտրոնային եղանակով տրված ներդիրները պարունակում են նաև արագ արձագանքման ծածկագիր (QR Code) և հետևյալ նշումը՝

«ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ _ _ _ _-_ _ _ _-_ _ _ _-_ _ _ _

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել՝ https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):»:».

18) N 3 հավելվածով հաստատված կարգի 9.1-ին կետի 3-րդ ենթակետը, N 5 հավելվածով հաստատված կարգի 10.1-ին կետի 3-րդ ենթակետը, N 9 հավելվածով հաստատված կարգի 10-րդ կետի 4-րդ ենթակետը, N 17 հավելվածով հաստատված կարգի 10-րդ կետի 4-րդ ենթակետը, N 19 հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետի 4-րդ ենթակետը «բնօրինակը» բառից հետո լրացնել «(բացառությամբ էլեկտրոնային եղանակով տրված լիցենզիաների)» բառերով.

19) N 3 հավելվածի N 7 ձևով հաստատված «ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ» հայտի 11-րդ կետը, N 5 հավելվածի N 9 ձևով հաստատված «ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ» հայտի 14-րդ

կետը, N 9 հավելվածի N 4 ձևով հաստատված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 8-րդ կետը, N 17 հավելվածի N 4 ձևով հաստատված «ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ» հայտի 6-րդ կետը, N 19 հավելվածի N 4 ձևով հաստատված «ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ» հայտի 7-րդ կետը «բնօրինակը» բառից հետո լրացնել «(բացառությամբ էլեկտրոնային եղանակով տրված լիցենզիաների)» բառերով.

20) NN 4 և 6 հավելվածների NN 1 և 2 ձևերից հանել «անժամկետ» բառը.

21) NN 2, 4, 6, 10, 18, 20 հավելվածները «Ձև N 1» բառերից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1-ին կետով.

«1. Էլեկտրոնային եղանակով տրված լիցենզիաները պարունակում են նաև արագ արձագանքման ծածկագիր (QR Code) և հետևյալ նշումը՝

«ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ _ _ _ _-_ _ _ _-_ _ _ _-_ _ _ _

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել՝ https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):»:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

21.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ